

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՓԻԹԵՐ ԲԱԼԱՔՅԱՆԻ
«ՃԱԿԱՏԱԳՐԻ ՍԵՎ ՇՈՒՆԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ն. Բ. ԳՍԼՍՅԱՆ

*ԳԱԱ Մ. Արեղյանի անվ. գրականության ինստիտուտի
արտասահմանյան գրականության բաժնի հայցորդ*

Հայոց ցեղասպանության հարցը միայն հայ ժողովրդի խնդիրը չէ. դա մի ցավ է, որը կհսում են ամբողջ աշխարհի բարի կամքի տեր մարդիկ՝ անկախ ազգությունից և կրոնից: Փիթեր Բալաքյանն իր հայկական արմատներով ու ամերիկյան անգլերենով կարողացավ ցույց տալ այդ ցավի գեղարվեստական դրսևորման ուժը: «Ուժով ու սրությամբ է գրում Բալաքյանը, արդարացված վիրավորանքով իր անցյալին դեմ-հանդիման նայելով ու այդ վիրավորանքը արվեստի վերածելով», -արձանագրում է «Լայբերի ժուրնալ»¹:

Փիթեր Բալաքյանն իր ստեղծագործություններով՝ «Ճակատագրի սև շունը» (1982), «Պայծառության տխուր օրեր» (1983), իր հայ գրչակիցների նման ամերիկյան գրականության մեջ անդրադարձավ հայոց ցեղասպանության թեմային՝ համաշխարհային հանրությանը մեկ անգամ ևս հիշեցնելով հայ ժողովրդի ողբերգության և վերածննդի մասին: «Հայոց ցեղասպանությունը մարդկության վիթխարի պատմության մի մասն է, -գրում է Փիթեր Բալաքյանը,-ընթերցողը, վաղ թե ուշ, գալիս, մտնում է նրա մեջ ու ընկալում այն: Հայ ժողովրդի 20-րդ դարի պատմությունը, հատկապես այն սոսկալի իրողությունները, որ տեղի ունեցան Օսմանյան Թուրքիայում, ողջ աշխարհին է, բոլորին է հետաքրքրում: Այն կազմում է մարդկության էպիկական պատմության մի էական մասը: Երբ ես սկսեցի գրել Հայոց ցեղասպանության մասին, այդ թեմայով շատ քիչ գրականություն կար անգլերեն: Ես մարտահրավեր նետեցի ներկային ու կենդանացրի այդ հրեշավոր իրողությունները: Ցանկացա ընտանիքիս պատմությունը տեղափոխել մի ավելի ընդարձակ՝ համամարդկային պատմության մեջ»²: Բալաքյանը գեղարվեստական

¹ Library journal, New York, 1997.

² Փիթեր Բալաքյան, Հայկական պահանջատիրությունն արդարության համար է, «Հայոց աշխարհ», Երևան, 25-ը ապրիլի, 2017:

խոսքի միջոցով աշխարհին ներկայացրեց և լուսաբանեց հայոց ցեղասպանությունը որպես համամարդկային խնդիր: «Հակառակ անոր, որ հեռաւոր Ամերիկայի մէջ, հայկական շրջապատի բացակայութեան, Փիթըր Պալաքեան կը ստանձնէ հայու ինքնութիւնը: Այդ ինքնութիւնը իր անձնաւորութեան համար առանցքային կը դառնայ, հայու ճակատագիրը, հայեցի ինքնութիւնը ստանձնող սփիւռքահայու մը գրչով կը համամարդկայնանայ: Փիթըր Պալաքեան թելադրուած, կաշկանդիչ պարտադրանքով հոգիի մը կպցուած ինքնութեան մը տէրը չէ: Այլ իր ազատ ընտրութեամբ՝ իր ձեւաւորուած անձնաւորութեան հետ ներդաշնակուող ինքնութեան մը ստանձնողն է: Ստանձնում մը՝ այնքան բնական եւ առողջ, որակ է ստեղծագործութեան, բան մը՝ որ նոյնիսկ բարձր կը գնահատուի ամերիկեան գրական աշխարհի մէջ ու կարժանանայ «Բէն Ալպրանտ» յիշողութեան մրցանակին»¹:

1982 թվականին լույս է տեսնում Փ. Բալաքյանի «Ճակատագրի սև շունը» (Black Dog of Fate, A Memoir) հուշագրությունը, որը 2002 թվականին գրականագետ, բանաստեղծ Արտեմ Հարությունյանի կողմից թարգմանվում է հայերեն և ներկայացվում հայ ընթերցողի դատին: Ինքնակենսագրական այս գիրքը համարվել է 1998-ի լավագույն հուշագրությունը, պարգևատրվել Փեն ակումբի միջազգային մրցանակով, թարգմանվել իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

«Ճակատագրի սև շունը» հուշագրությունն իր վրա սևեռեց թե՛ հայ, թե՛ օտար ընթերցողների ուշադրությունը՝ արժանանալով բարձր գնահատականի: «Ֆրեզնո Բի» թերթը գրում է. «Գեղեցիկ մի գիրք է սա: Բալաքյանի գրքում միահյուսված են հայկական անցյալի պատմության մութ սարսափներն ու ամերիկյան միջին դասակարգի կյանքը: Բալաքյանը խոսեցրել է մի ժողովրդի, որը գրեթե ոչնչացվեց, ու պատմել է մի պատմություն, որը բոլորի կողմից կարդացվելու է»²: Ուշագրավ է նաև «Ֆորըն Ըֆֆերզ»-ի գնահատականը. ««Ճակատագրի սև շունը» սկսվում է որպես նրբագեղ Հոլդեն Քոֆիլտանման պատանեկության հուշագրություն...ու վերջանում է որպես սրտաբուխ մի ճիշ՝ վիթխարի գրական վարպետությամբ արտագրված, որն ուղղակի ներթափանցում է

¹ Պայծիկ Գալաճեան, «Ազգային ինքնութեան խնդիրը Փիթըր Պալաքեանի «Ճակատագրի սև շունը» գրքին ընդմէջէն», ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերական, 23-ը հոկտեմբերի, 2013:

² Փիթեր Բալաքյան, «Ճակատագրի սև շունը», Երևան, «Տիգրան Մեծ» հրատ. , 2003:

ընթերցողների զգացմունքների մեջ և անօրինակ կերպով բացատրում, թե ինչպես և ինչու Մեծ Եղեռնին դեռևս այնքան կատաղորեն կպած է հայկական Սփյուռքը»¹: Դրվատական գրախոսականներով հանդես եկան շատ ու շատ գրողներ և գրաքննադատներ: ««Ճակատագրի սև շունը», - գրում է ամերիկացի գրաքննադատ Ռոբերտ Ջեյ Լիֆտոնը, - հուշագրությունների մեջ մնալու է որպես դասական նմուշ, որովհետև ազդու կերպով տալիս է ամերիկահայ պատմությունը, վերականգնում է անասելի անձնական ու ընտանեկան ճշմարտություններ՝ ուժեղ բանաստեղծի գրչով»²: Հուշագրությունը արժանացել է նաև ամերիկացի խիստ գրաքննադատ Ալֆրեդ Կեյզինի բարձր գնահատականին. «Բալաքյանը, շնորհալի մի բանաստեղծ, գիտի իսկ և իսկ անցյալի ցավը տեղադրել ներկա պոեզիայում: Կրքոտ ու անձնական այն աստիճանով, որ սիրել է տալիս...մի արտակարգ գիրք»³:

Բալաքյանի «Ճակատագրի սև շունը» հուշագրությունն իր տոհմի պատմությունն է, նաև մի ամբողջ ազգի պատմություն, որը 1915 թվականին եղեռնից մազապուրծ ցաքուցրիվ եղավ աշխարհով մեկ, ենթարկվեց բազում փորձությունների, մահվան հետ մաքառեց, ճանապարհին շատերին կորցնելով՝ ապաստան գտավ օվկիանոսից այն կողմ՝ ԱՄՆ-ում, բայց երբեք չընկճվեց, իր մեջ ուժ գտավ ապրելու և հարատևելու:

«Փիթր Պալաքեանի գիրքը դասական ինքնակենսագրութիւն մը չէ, - գրում է Պայծիկ Գալաճյանը, - այլ իր ընտանիքին պատմութեան ընդմէջէն ան կը ստեղծէ 20-րդ դարու առաջին Յեղասպանութեան վերաբերեալ հրաշալի գործ մը, որ յուշագրութենէն դանդաղօրէն վերածուեցաւ թուրքերու կողմէ սանձազերծուած՝ Հայերու ցեղասպանութեան պատմութեան»⁴: Բալաքյանն իր հուշագրությամբ պատկերեց իր ընտանիքը, իր արմատները, ծնողներին, տատերին ու պապերին, իր մանկության, պատանեկության, հասունության տարիները, ցեղասպանությունը, որի «հուշը յուրաքանչյուր հայ կրում է իր գեներում»:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Պայծիկ Գալաճեան, «Ազգային ինքնութեան խնդիրը Փիթր Պալաքեանի «Ճակատագրի սև շունը» գրքին ընդմէջէն», ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերական, 23-ը հոկտեմբերի, 2013:

Հայ մարդու զգացողությամբ և ամերիկացու հոգեբանությամբ կարողացավ ներկայացնել այն երկիրը, ուր ապրել էին իր հարազատները, որն ինքը չէր տեսել, որից, որպես սրբազան մասունք, ոչինչ չէր մնացել՝ ո՛չ քարտեզ, ո՛չ լուսանկար, ո՛չ գեղեցիկ որևէ պատկեր: Երկիրը երևութաձև-երևակվում էր միայն իր տատի տեսքով. «Ինչ էլ որ տատս էր,-հավաստում է գրողը,- ուրեմն՝ հենց երկիրն էր, բառ որի վրա կարծես կողպեք կար»¹: Դեռ մանուկ՝ Բալաքյանը պապերի երկրին հաղորդակից է դառնում տատի պատմություններով: «Երբ տատիս հետ էի,-վկայում է գրողը,-հաղորդակից էի լինում ինչ-որ այլ աշխարհի, լույսի ու մութի, բայց դեպի իրեն քաշող աշխարհի, զորության մի տարօրինակ դրսևորման, որն անտանելի ուժի նման Հայաստան կոչվող հնագույն երկրից հոսում-հասնում էր իմ աշխարհը՝ Նյու-Ջերսի: Ինչ-որ հնագույն մի բան էր՝ կապված երկրի, բառերի, արյան ու երկնքի հետ»²:

Նա մտքով տեղափոխվում է այն աշխարհը, ուր ապրում էին իր ընտանիքն ու բարեկամները, որոնք իրենց զավակներին հայերեն չէին սովորեցնում՝ չցանկանալով «խաթարել» նրանց հոգիները. «Ոչ ոք չէր ուզում խոսել անցյալի տրավմայի մասին, 1915թ. դեպքերի, որի պատճառով իմ երկու կողմի պապերն ու տատերն էլ ամբողջ կյանքի համար խորը սպիներ են ստացել: Սա ցավալի թեմա էր, ու երեխաներին ու երիտասարդներին չէր վերաբերում, հատկապես երջանիկ ու հարուստ արվարձանում, որտեղ ես մեծացել եմ»³: Վախենում էին, որ չար ճակատագիրը, ճակատագրի սև շունը՝ թուրքը, կհետապնդի իրենց, նրանց միակ ցանկությունն էր, որ իրենց՝ որպես Ամերիկայի նորընծա հպարտ քաղաքացիների, հանգիստ թողներին, «որպեսզի խաղաղ պայմաններում հնարավորություն ունենային պահելու իրենց ընտանիքները, աշխատելու և ապրելու»⁴:

Մանկության տարիների այս վերհուշը ինքնաորոնման առիթ է դառնում: Ուսանողական տարիներին միայն, երբ ինքը դեռ առաջին կուրսի ուսանող էր, մորաքույրերի միջոցով կարողանում է բացահայտել իր ազգի, իր գերդաստանի ողիսականը, որն ավելի իրատեսական է դառնում

¹ Փիթեր Բալաքյան, «Ճակատագրի սև շունը», էջ 19:

² Նույն տեղում, էջ 20:

³ «Առավոտ» թերթ, 28-ը փետրվարի, 2013:

⁴ Փիթեր Բալաքյան, «Ճակատագրի սև շունը», էջ 215:

տատի թողած պաշտոնական փաստաթղթերի միջոցով, որոնք բողոքներ էին թուրքական կառավարության դեմ: Անցյալը գրողից գաղտնի պահելը ուներ իր բացատրությունը. նախ նա դեռ պատրաստ չէր այդ ամենը հասկանալու, հանարավոր էր՝ այդ ամենը հասկանալը խանգարեր նրան, ապա տատի լուրջությունը: Բալաքյանը մեկ առ մեկ պատմում է բոլոր բարեկամների՝ տատիկների, պապիկների, հոր, մոր, հորաքույրերի, մորաքույրերի մասին:

Տառը՝ Նաֆինա Չիլինգիրյանը (Շեքերլեմեջյան) ծնվել և ապրել է Դիարբեքիրում մինչև 1915 թվականը: Ամուսնացել է Հակոբ Չիլինգիրյանի հետ: Երբեմնի երջանիկ ընտանիքը 1915 թվականի օգոստոսի 1-ին շատուշատ հայերի հետ, թողնելով իրենց շեն տունն ու ունեցվածքը, բռնի, մահվան սպառնալիքով տեղահանվում է: Պապը՝ Հակոբ Չիլինգիրյանը, ինչպես նշում է Բալաքյանը, «եղել է ԱՄՆ քաղաքացի, բնակվել է ԱՄՆ-ում՝ սկսած անչափահաս տարիքից մինչև 1909 թվականը», բայց անգամ ԱՄՆ քաղաքացի լինելը նրան չի փրկել տեղահանությունից. յուրաքանչյուր հայ պետք է մահվան դատապարտվեր. սա էր թուրքական կառավարության հրամանը: «Ամուսինս,-վկայում է Նաֆինան,-հակառակ ԱՄՆ քաղաքացի լինելուն, մեզ հետ միասին բռնի ուժով արքայազնաց, և զինվոր-նստիկանները նրանից խլեցին քաղաքացիության մասին փաստաթուղթն ու անձնագիրը: Քանի որ նա տկար էր ու թույլ, անտանելի պայմաններին ենթարկվելով և տեսնելով, թե ինչ դաժանությամբ սպանվեցին մեր ազգականները, չկարողացավ դիմանալ և մահացավ՝ թողնելով ինձ միայնակ այրի՝ երկու որբ դուստրերիս՝ 7 տարեկան Զվարթի, 5 տարեկան Արշալույսի հետ»¹:

Նաֆինան, անցնելով կյանքի՝ ողբերգություններով լի ճանապարհով, կորցնելով գրեթե բոլոր հարազատներին, իր մեջ ուժ է գտնում դիմագրավելու կյանքի բոլոր դժվարությունները և սեպտեմբերի սկզբներին դուստրերի հետ հասնում է Սիրիա՝ Հալեպ, որտեղից էլ 1920թ. տեղափոխվում է Ամերիկա, ամուսնանում երկրորդ անգամ՝ ստանալով երկրորդ ամուսնու՝ Պետրոս Արուսյանի ազգանունը: Շեքերլեմեջյանները և Արուսյանները երկրում եղել են հայտնի մետաքսագործներ, մետաքս վերամշակողներ և մետաքսի առևտարականներ, ունեցել են հարյուրավոր հեկտար թթենու այգիներ, որոնք դաժանաբար խլվել են նրանց ձեռքից:

¹ Նույն տեղում, էջ 242:

Նաֆինան՝ որպես փոխվրեժ թուրք հրոսակների նկատմամբ, ունենում է ևս մեկ դուստր և երկու որդի՝ շարունակելով իր տոհմի շառավիղը, վառ պահելով զոհված հարազատների հիշատակը: Հեռավոր Ամերիկայում նա փորձում է պահպանել ազգային սովորույթները, հայկական ընտանեկան արժեքները: Նաֆինան քաջ գիտակցում է, որ օտար երկրում ազգային ինքնությունը կարելի է պահպանել միայն այս ձևով: Եվ պատահական չէ, որ կիրակի օրերին՝ ժամերգությունից հետո, իր հյուրընկալ տանը սիրով ընդունում է ազգականներին, հայկական ուտեստներ հրամցնում, հետևում ազգային ծեսերին: «Կիրակին ընտանեկան օր էր: Կիրակի օրերին մենք ավելի հայ էինք թվում: Ազգակիցների որոշակի կարգը՝ տատս, մորաքույրերս, հորեղբոր, մորեղբոր որդիները, հորեղբայր, քեռիներս պարտադիր պետք է ներկա գտնվեին»¹: Սա դեռ ամենը չէ. հիշողության միջոցով վերակենդանացնում է անցյալը, որը նրան ուժ է տալիս ապրելու, պայքարելու: Նա առանց վարանելու դառնում է իր ու իր նահատակված հարազատների իրավունքների պահանջատերը, պատիվ և փոխհատուցում պահանջում թուրքական կառավարությունից՝ քաջ գիտակցելով, որ այն կարող է դառնալ իր մահվան պատճառը:

Իսկ ահա հոր հայրը՝ Տիրան Բալաքյանը, եղել է հայտնի բժիշկ, սովորել է Էջմիածնի տարրական դպրոցում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա Լայպցիգի բժշկական համալսարանում՝ ստանալով գիտական աստիճան, մասնագիտացել է ակնաբուժության մեջ, հեղինակել բազմաթիվ բժշկական հոդվածներ: Նա այն 250 մտավորականների թվում է եղել, ովքեր ապրիլի 24-ին ձերբակալվել են ու աքսորվել Պոլսից, անցել հայկական գողգոթայի միջով՝ գաղթի ճամփաներով, ու հրաշքով փրկվել՝ հաստատվելով Վիեննայում: Տատը՝ Գոհարիկ Փանոսյանը, սովորել է Կոստանդնուպոլսի ամերիկյան օրիորդաց վարժարանում: Պապը, շնորհիվ իր կապերի, կարողացել է ընտանիքը անվնաս հասցնել Եվրոպա: «Բալաքյաններն ու Փանոսյանները մտավորականությանն ու մշակույթին վերաբերվում էին կրոնական կրքոտությամբ,-հավաստում է Բալաքյանը,- Օսմանյան կայսրությունում Բալաքյաններն ու Փանոսյանները եղել են եկեղեցականներ, ուսուցիչներ, բժիշկներ»²: Նրանք, գնալով բազում զոհողությունների, իրենց զավակներին կրթության են տալիս՝ քաջ

¹ Նույն տեղում, էջ 43:

² Նույն տեղում, էջ 104:

գիտակցելով, որ օտար երկրում կրթությունը ազգային ինքնությունը պահելու, աշխարհին որպես ճանաչված հայ ներկայանալու յուրօրինակ ձև է: Որդին դարձել է բժիշկ, երկու դուստրերը՝ Նոնան և Աննան՝ գրականագետներ: «Աննա հորաքույրը Նյու Յորքի համալսարանի ռոմանական լեզուների ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի պրոֆեսոր էր, քույրը՝ Նոնան, երկար տարիներ խմբագիր էր աշխատում «Նյու Յորք Թայմզ Բուք Ռիվյու»-ում: Երկուսն էլ մի շարք գրքերի հեղինակներ էին: Աննա հորաքույրը գրում էր ֆրանսիական գրականության, հատկապես ֆրանսիական պոեզիայի մասին, Նոնա հորաքույրը ամերիկյան գրականության, երբեմն նաև ամերիկացի հայ գրողների մասին: Նա «Նյու Յորք Թայմսի» առաջին կին խմբագիրն էր»¹:

Հուշագրությունում տարբեր մարդկանց մոտ տարբեր ձևով է արտահայտվում «հինավուրց երկրի» գոյությունը: Այսպես, օրինակ, տատիկի՝ Նաֆինայի, մոր, մորաքույրերի մոտ այն արտահայտվում է կենցաղում, հատկապես խոհանոցում տարբեր տեսակի հայկական ուտեստներ պատրաստելիս, սեղան զցելիս, մետաքսյա հագուստներ կրելիս, հորաքույրերի համար էլ ազգային պատմությանը, գրականությանը քաջատեղյակ լինելով, բարեկամական կապեր ունենալով հայազգի գրողների հետ, նրանց հետ միասին հարազատ հայկական միջավայր ստեղծելով: «Ամերիկահայ գրողներու խումբ էր հորաքույր Աննայի տանը՝ Մարջրի Հովսեփյան Դոբկին, Մայքլ Առլեն, Փիթեր Սուրյան, Լեո և Լինդա Համայաններ, Ջեք Անդրեսայան, Հարի Քեյիշյան, Նշան Փառլաքյան, Ֆրեդ Ասատուրյան, ջագի և բյուզի ռեժիսոր Ջորջ Ավագյան և Սարոյան. Նա մարմնացումն էր այն առանձնահատուկ զգայունության, որ ունեին գրեթե բոլոր ամերիկահայերը»²: Վ. Սարոյանը օտար երկրում հանգրվանած հայերի համար երկրի խորհրդանիշն էր, նա ազգին պատկանող մեծ անհատականություն էր, ազգի ոգին: Նրանով ազդված և ոգեշնչված՝ իրենց հոգեկան խռովությունն էին հաղթահարում գրական գործիչները՝ Մայքլ Առլեն Ավագն ու Կրտսերը, Հակոբ Խչիկյանը, ովքեր, ներքուստ ինչ-որ բանից վախենալով, ոչ մի տեղ չէին նշում, որ իրենք հայ են, բայց որոնց հոգում ապրում և փոթորկվում էր հայ ոգին: Նա իր ներկայությամբ ոգեշնչում է նաև Փիթեր Բալաքյանին և էլի շատ ու շատ

¹ Նուն տեղում:

² Նույն տեղում, էջ 160:

գրական գործիչների. «Առավել, քան որևէ մեկը, Վիլյամ Սարոյանն էր, որ բացահայտեց գրականության խաչասերման՝ հորաքրոջս յուրօրինակ ըմբռնումը և տարագրության էության հանդեպ նրա զգացումները»¹:

Հայրը ծնվել է Կոստանդնուպոլսում: Երկու տարեկան է եղել, որ ծնողների ու քույրերի հետ հեռացել է այնտեղից: Կոստանդնուպոլսի մասին գրեթե հիշողություն չուներ: Արտաքին տեսքով, կեցվածքով գրեթե չէր տարբերվում բնիկ ամերիկացիներից: Նա իրեն երբեք գաղթական չի համարել: «Խոսում էր Մանհատնի մաքուր ամերիկյան անգլերենով: «Բուքս եղբայրների» կոստյումներով նման էր «Այվի Լիգի» ցանկացած համալսարանավարտի, որ հասարակական կյանքի բովով առաջ էր ընթանում արվարձանային բժշկի արժանապատիվ ինքնավստահությամբ: Նրա տեսքը պաշտոնական էր, սակայն միշտ էլ պարզ ու հասարակ էր և՛ գրասենյակում, և՛ ծնողական ժողովների ժամանակ ու «Փոքրերի Միության» խաղերին»²: Նա հայերեն չէր խոսում, խոսում էր միայն այն ժամանակ, երբ երեխաներից թաքուն ինչ-որ բան էր ասվում: Անգամ իր ազգությամբ հայ հիվանդների հետ, ովքեր դժվարությամբ էին անգլերենով արտահայտվում, խոսում էր անգլերենով՝ ասելով՝ «Աշխարհում միայն մեկ լեզու գոյություն ունի»: Հաճախ զրուցակիցներին ներկայանալիս ասում էր, որ ծնվել է Նյու Յորք Սիթիում. ««Այսպես ավելի ճիշտ է,-ասում էր,-երբեք մահանամ, կգրեք՝ ծնված Նյու Յորք Սիթիում»,-մի անգամ խոսեց հետս, երբ դեռ քոլեջում էի սովորում: Սակայն իր հայ ընկերների շրջապատում երբեք նման բան չէր ասում. նրանք բոլորն էլ գիտեին, որ ծնվել է Կոստանդնուպոլսում»³: Փիթեր Բալաքյանը Մայքլ Արլեն Կրտսերի նման այստեղից-այնտեղից, ինչ-որ թռուցիկ պատմությունից, ակնարկից, բառերից, ներքին դեռևս անորոշ զգացումից վախենալով՝ փորձում էր հայերեն այս կամ այն բառին, մտքին հնչեղություն ու իմաստ տալ և մտքում կառուցել այն ամբողջ պատկերը, որը պտտվում է այդ բառի կամ մտքի շուրջ. «Կոս-տանդ-նու-պո-լիս» բառը դարձնում է հոր մասին հյուսված պատմության հանգույցը. «Այս բառը թաքուն պաշարել էր ինձ: Դժվար էր հավատալ, որ հայրս, ում կիրքը ֆուտբոլի հանդեպ հասնում էր Վիս Լոմբարդիին, Միացյալ

¹ Նույն տեղում, էջ 167:

² Նույն տեղում, էջ 89:

³ Նույն տեղում:

Նահանգներում չէր ծնվել: Իմ մտապատկերներում գոյություն ուներ հորս ծննդավայրը, որ ձևավորվել էր մեծերի զրույցների ընթացքում ականջիս հասած ինչ-որ նկարագրությունների, տատիս ճաշասենյակի պատից կախված Սարգիս Խաչատրյանի վրձնանկարի ու «Ուորլդ Բուքում» կարդալու հիման վրա: Կոստանդնուպոլիս, Այս անունը նույնիսկ քարտեզի վրա գոյություն չուներ»¹: Նա թեև իրեն ամերիկացի էր համարում, բայց հոգու խորքում մնում էր հպարտ, ընդվզող հայ, և դա առավել ցայտուն դրսևորվում է որդու ուսումնառության տարիներին: Իմանալով, որ որդին Մերձավոր Արևելքի քաղաքակրթության վերաբերյալ առաջադրանք է գրելու, ոգևորված ասում է. «Ահա և լավ հնարավորություն՝ Հայաստանի մասին ինչ-որ բան իմանալու: Հոյակապ հնարավորություն է ուսումնասիրելու համար»²: Սակայն մեծ հիասթափություն է ապրում, երբ որդու աշխատանքում չի գտնում հայերի մասին ոչ մի ակնարկ և թուրքական պետության կողմից հայերի հանդեպ կատարած ոճրագործության ոչ մի լուրջ գնահատանք: «Մի քանի թուրքերը վայր դրեց: Մի պահ լուռ էր: Աչքիս ծայրով նրան էի զննում, դեմքին սառել էր անասելի բարկության արտահայտությունը, և ես զգացի, որ հոգում ինչ-որ ծանրություն կար, ավելի էական, քան իմ աշխատանքից պարզապես հիասթափված լինելը: Նրա լռությունը կարծես պատել էր ողջ ներաշխարհը»³:

Թափանցելով հարազատների հիշողության խորքերը, ուսումնասիրելով իր ժողովրդի պատմության մասին գիտական, փաստագրական բազմաթիվ աշխատություններ՝ Բալաքյանը լիակատար պատկերացում է կազմում իր ժողովրդի պատմության մասին: Նա կարդում է թե՛ թուրք, թե՛ թուրքամետ այլազգի հեղինակների գրքերը, հոդվածները և տեսնում, թե որքան է խեղաթյուրված պատմությունը: «Ո՛չ համաշխարհային առաջին պատերազմից առաջ, ո՛չ էլ դրա ընթացքում Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ ցեղասպանություն չի իրագործվել: Ցեղասպանություն չի ծրագրվել կամ հրահանգվել օսմանյան կառավարության կողմից և ցեղասպանություն չի իրագործվել»⁴: Պատմությունն այնպես է խեղաթյուրված, կարծես ցեղասպանություն

¹ Նույն տեղում, էջ 90:

² Նույն տեղում, էջ 112:

³ Նույն տեղում, էջ 115:

⁴ Նույն տեղում, 318:

կոչվածը հայերի հորինածն է, որոշ գրքերում էլ այդ մասին առհասարակ որևէ բառ կամ ակնարկ անգամ չկա: «Նախնիներս դուրս են մղվել այն երկրից, որտեղ ապրել են 25 դար, մեկը մյուսի ետևից սպանվել են, և այն ամենը, ինչ սովորաբար, դարերի ընթացքում մեծագույն խնամքով ստեղծել են, կամ բռանագրավվել, կամ ոչնչացվել է, իսկ այսօր այդ նույն թուրքերի թոռները սողում են Միացյալ Նահանգների առջև, որպեսզի վերջինս արգելի հայերին պատմելու իրենց գլխին եկածը: Չարագործները փորձում են լռեցնել զոհերին ու նրանց սերունդներին»¹: Բալաքյանը համոզված է՝ որքան էլ թուրքական կառավարությունը փորձի նենգափոխել պատմությունը, ժխտել ցեղասպանությունը, միևնույն է, դա նրան չի հաջողվի. հայոց Մեծ Եղեռնի իրողությունը պատմական փաստ է՝ հաստատված բազում փաստաթղթերով, օտարազգի և հայ ականատեսների վկայություններով, լուսանկարներով: Այն վաղ թե ուշ դատապարտվելու է, պահանջելու իր արդար հատուցումը: Եթե իր հարազատների համար ազգային ինքնությունը պահողը հիշողությունն է, անցյալին ապավինելը, ապա իր, իր սերնդակիցների և հետագա սերունդների համար՝ ազգային պատմությունը, մշակույթն իմանալը, ազգին ծառայելը, և, որ ամենակարևորն է, հիշատակությունը: «Հիշատակությունը էական գործընթաց է,-ասում է Բալաքյանը,- ծանր կորուստ ունեցողների և ցեղասպանության փորձառությունը ժառանգած սերունդների համար: Դրա միջոցով կարելի է իմաստավորել աներևակայելի սարսափներն ու կորուստները: Քանզի ցեղասպանությունից հետո մեռյալները բառացիորեն կամ զգացմունքայնորեն չեն թաղվել, հիշատակությունը նաև նրանց հողին հանձնելու ծիսակատարություն է՝ քաղաքակրթության առաջին ձեռնարկումը: Քանի որ ցեղասպանությունը փորձում է ժխտել ամեն իմաստ, ավերել աշխարհը, վերապրողներն ու նրանց զավակները պարտավոր են հետդարձի ուղիներ փնտրել դեպի քաղաքակրթություն: Հիշատակությունն, այսպիսով, հանրայնորեն օրինականացնում է զոհերի հարատևող ցավը: Ծանր կորուստներ կրելու բեռը կարելի է թեթևացնել՝ այն կիսելով ավելի լայն հանրության հետ, նաև տեղեկացնելով նրան: Միայն այսպես կարելի է նվաճել փրկություն, հույս և միաբանություն»²:

¹ Նույն տեղում, էջ 319:

² Նույն տեղում, էջ 337:

Բանալի բառեր՝ ցեղասպանություն, հուշագրություն, ինքնություն, իրողություն, զգացողություն, քննադատություն, վերհուշ:

Օգտագործած գրականության ցանկ

1. «Հայոց աշխարհ», Փիթեր Բալաքյան, Հայկական պահանջատիրությունն արդարության համար է, Երևան, 25-ը ապրիլի, 2017:
2. ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերական, Պայծիկ Գալաճեան, «Ազգային ինքնութեան խնդիրը Փիթրը Պալաքեանի «Ճակատագրի սեւ շունը» գրքին ընդմէջէն», 23-ը հոկտեմբերի, 2013 :
3. Փիթեր Բալաքյան, «Ճակատագրի սև շունը», Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2003:
4. Library jurnal, New York,1997.

THE ISSUE OF ARMENIAN GENOCIDE IN THE " BLACK DOG OF FATE " MEMOIRS BY PETER BALAKYAN

N. B. GALSTYAN

*Institute of literature after M. Abeghyan of NAS
Applicant of the Department of Foreign Literature*

The article discusses the issue of Armenian Genocide in the memoirs of " Black Dog of Fate" by Peter Balakyan and the idea of preserving the national identity.

ТЕМА ГЕНОЦИДА АРМЯН В МЕМУАРАХ ПИТЕРА БАЛАКЯНА "ЧЕРНАЯ СОБАКА СУДЬБЫ"

Н. Б. ГАЛСТЯН

*соискатель отделения зарубежной литературы
института имени М. Абеяна НАН РА*

В мемуарах Питера Балакяна "Черная собака судьбы" рассматривается тема геноцида армян и идея сохранения национальной самобытности.